

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը
Նստարանի համարը



Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: **Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:**

Մաղթում ենք հաջողություն:

1 Ո՞ր մկաններին է պատկանում քոչունների թևերի իջեցման հիմնական դերը.

- 1) կրծքային մեծ
- 2) ենթանրակային (կրծքային փոքր)
- 3) ենթանրակային և միջկողային
- 4) միջկողային

2 Մնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) մուկորը խմորասունկ է
- 2) խմորասնկերը միաբջիջ են
- 3) սնկերը իրենց մարմնում կուտակում են գլյուկազոն ածխաջուրը
- 4) դրոժը և պենիցիլը բորբոսասնկեր են

3 Ո՞ր բույսն է պատկանում երկշաքիլավորների դասին.

- 1) ցորենինը
- 2) սոխը
- 3) շուշանինը
- 4) ձմերուկը

4 Թվարկվածներից որո՞նք են բնորոշ միջատների արյունատար համակարգին.

- 1) բաց արյունատար համակարգ և խողովակաձև սիրտ
- 2) փակ արյունատար համակարգ և երկխորշ սիրտ
- 3) փակ արյունատար համակարգ և խողովակաձև սիրտ
- 4) բաց արյունատար համակարգ և օղակաձև հաստ պատերով անորոշեր

5 Ինչի՞ առկայությամբ են մողեսները տարրերվում գորտերից.

- 1) կոյանոցի
- 2) կերակրավիոնի
- 3) կոպերի
- 4) կրծքավանդակի

6 Ո՞ր պնդումն է սխալ մարդու արյան մակարդման վերաբերյալ.

- 1) ֆիբրինը ազդում է ֆիբրինոգենի վրա՝ նրան դարձնելով բրոմբին
- 2) բրոմբի կազմի մեջ մտնում է ֆիբրին
- 3) բրոմբի կազմի մեջ մտնում են բրոմբոցիտներ
- 4) լուծելի սպիտակուցք վերածվում է անլուծելի սպիտակուցի

7

Ի՞նչ է կատարվում մարդու օրգանիզմում միջավայրի ցածր ջերմաստիճանային պայմաններում.

- 1) մաշկի արյունատար անոթները լայնանում են, և փոքրանում է արյան հոսքի արագությունը
- 2) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը
- 3) աճում է դեպի մաշկ հոսող արյան քանակը
- 4) մեծանում է ջերմատվությունը

8

Մարդու օրգանիզմում որտե՞ղ է բացվում ընդհանուր լեղածորանը.

- 1) ուղիղ աղու մեջ
- 2) կույր աղու հիմքում՝ հաստ աղու մեջ
- 3) ենթաստամոքսային գեղձի մեջ
- 4) տասներկումատնյա աղու մեջ

9

Մարդու գլխուղեղի ո՞ր բաժնում են գտնվում քնի, քաղցի, ծարավի, ջերմակարգավորման կենտրոնները.

- 1) միջանկյալ ուղեղ
- 2) կամուրջ
- 3) միջին ուղեղ
- 4) երկարավուն ուղեղ

10

Ե՞րբ է առաջանում մարդու բրոնզախտ հիվանդությունը.

- 1) ենթաստամոքսային գեղձի թերգործառույթի հետևանքով
- 2) մակերիկամների միջուկային շերտի հորմոնների անբավարարության դեպքում
- 3) ենթաստամոքսային գեղձի գերգործառույթի հետևանքով
- 4) մակերիկամների կեղևային շերտի հորմոնների անբավարության դեպքում

11

Ո՞ր պնդումն է սխալ մարդու անդաստակային օրգանի կառուցվածքի վերաբերյալ.

- 1) կիսաբոլոր խողովակները պարունակում են հեղուկ
- 2) երեք կիսաբոլոր խողովակները փոխուղղահայաց են
- 3) երեք փոխուղղահայաց պարկերը լցված են հեղուկով, որը շարժվում է դիրքի փոփոխությունից
- 4) կազմության մեջ մտնում են ձվածն և կլոր պարկիկները

12

Մարդու օրգանիզմում ո՞ր ոսկորներն են հոդավորված.

- 1) կրծոսկրը և կողոսկրերը
- 2) ազդրոսկրը և կոնքոսկրը
- 3) պոչուկային բաժնի ոսկրերը
- 4) սրբոսկրը և կոնքոսկրերը

13 Ինչի՞ ազդեցությամբ է տեղի ունենում մարդու սրտի աշխատանքի դանդաղումը.

- 1) կալիումի իոնների և աղբենալինի
- 2) ացետիլսուլինի և կալցիումի իոնների
- 3) սիմպաթիկ նյարդային համակարգի
- 4) պարասիմպաթիկ նյարդային համակարգի

14 Ֆոտոսինթեզի մթնային փուլի համար ելանյութեր են.

- 1) ածխաբթու գազը, մոլեկուլային ջրածինն ու թթվածինը
- 2) օվան և ԱԵՖ-ը
- 3) ածխաբթու գազը, ատոմային ջրածինը և թթվածինը
- 4) ածխաբթու գազը, ատոմային ջրածինը և ԱԵՖ-ը

15 Քակտերիաների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) խոզուկ, հեպատիտ, պոլիոմիելիտ, ծաղիկ հիվանդությունների հարուցիչները բակտերիաներն են
- 2) չունեն ձևավորված կորիզ
- 3) ԴՆԹ-ն սպիտակուցի մոլեկուլների հետ համալիրներ չի առաջացնում
- 4) բջջապատը կազմված է սպիտակուցներից, ածխաջրերից, հանդիպում են նաև լիպիդներ

16 Ո՞ր նյութերի սինթեզն է քնորոշ ողորկ էնդոպլազմային ցանցին.

- 1) նուկլեինաթթուների
- 2) ԱԵՖ-ի և նուկլեինաթթուների
- 3) ածխաջրերի և լիպիդների
- 4) սպիտակուցների

17 Ո՞ր շարքում են թվարկված միայն պենտոզները.

- 1) ֆրուկտոզը և գալակտոզը
- 2) գլուկոզը և ֆրուկտոզը
- 3) ֆրուկտոզը և դեզօքսիբուտոզը
- 4) դեզօքսիբուտոզը և ռիբոզը

18 Ի-ՈՒՆԹ-ի մոլեկուլում ո՞ր եռյակին է համապատասխանում փ-ՈՒՆԹ-ի ՈՒԱՑ գաղտնագրող եռյակը.

- 1) ԱՌԴԳ
- 2) ԱԹ-Գ
- 3) ՈՒԱԳ
- 4) ԹԱՅ

19

Հետևյալ կառուցվածքներից որտե՞ղ չի պարունակվում ՌՆԹ.

- 1) ռիբոսոններում
- 2) ցենտրիուններում
- 3) կորիզակում
- 4) Գոլջիի ապարատի թաղանթների վրա

20

Ինչպե՞ս են դասավորված լիալիդների մոլեկուլները պլազմային թաղանթում.

- 1) կազմում են երկշերտ, որում «ապոչիկներն» ուղղված են դեպի արտաքին կողմեր, իսկ «գլխիկները»՝ դեպի ներս
- 2) կազմում են երկշերտ, որում «ապոչիկներն» ուղղված են դեպի ներս, իսկ «գլխիկները»՝ դեպի արտաքին կողմեր
- 3) դասավորված են մեկ շարքով
- 4) սալիտակուցների, նուկլեինաթրուների մոլեկուլների հետ կազմում են իրար կանոնավոր հաջորդող շերտեր

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) կորիզահյութի քիմիական կազմը չի տարբերվում ցիտոպլազմայի թաղադրությունից
- 2) կորիզակները առաջանում են քրոմոսոմի Ռ-ՌՆԹ-ի կառուցվածքը ծածկագրող հատվածների շուրջը
- 3) կորիզաթաղանթի ներքին թաղանթը պատված է ռիբոսոններով, էնդոպլազմային ցանցով
- 4) քրոմատինը ՌՆԹ-ի ու հիստոնային և ոչ հիստոնային սալիտակուցների համալիր է

22

Ո՞ր հատկանիշն ունի ռեակցիայի նեղ նորմա.

- 1) սերմերի գանգվածը
- 2) աչքերի գույնը
- 3) բույսի բարձրությունը
- 4) կովերի կաքնատվությունը

23

Ո՞ր արոցեսն է տեղի ունենում միտոզի մետաֆազ փուլում.

- 1) քրոմոսոմների դասավորումը իլիկի հասարակածային հարթության վրա
- 2) քրոմատիդների տարամիտումը դեպի բջջի բնեղմեր
- 3) քրոմոսոմների կոնյուգացիան
- 4) բջջի ցիտոպլազմայի բաժանումը

24

Ինչպիսի՞ ճեղքավորում է ստացվում երկիետերողիզու առանձնյակների խաչաերման արդյունքում՝ երկու ալեներով էլ ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) ֆենոտիպային և գենոտիպային ձևերի հավասար քանակ
- 2) ֆենոտիպային ձևերի ավելի մեծ քանակ գենոտիպային ձևերի նկատմամբ
- 3) 9:3:3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի
- 4) 9:3:3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի

25

Ո՞ր կենդանու օրգանիզմում է հանդիպում արական հետերոգամետուրյուն.

- 1) թռչունի
- 2) սողունի
- 3) դրոզոֆիլ պտղաճանճի
- 4) պոչավոր երկկենցաղի

26

Ինչպե՞ս են անվանում տվյալ տեսակին պատկանող օրգանիզմների քրոմոսոմների հապլոիդ հավաքի ԴՆԹ-ի մոլեկուլների ամբողջուրյունը.

- 1) ֆենոտիպ
- 2) գենոմ
- 3) գենոֆոնդ
- 4) գենոտիպ

27

Ի՞նչ արդյունք է ստացվում հետերոզիզու և հոմոզիզու ռեցեսիվ առանձնյակների միահիբրիդ խաչաերման ժամանակ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում.

- 1) ֆենոտիպային միակերպուրյուն
- 2) 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 3) 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 4) 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի

28

Մենդելի երրորդ օրենքը վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող գույց ալելային գեները գտնվում են.

- 1) ոչ հոմոլոգ քրոմոսոմներում և ժառանգվում են շղթայակցված
- 2) տարբեր գույց հոմոլոգ քրոմոսոմներում
- 3) մեկ քրոմոսոմում
- 4) տարբեր չորս գույց ոչ հոմոլոգ քրոմոսոմներում

29

Տեսակների միջև գործող ո՞ր փոխհարաբերությունն է օգտակար երկու տեսակների համար.

- 1) ամենսալիզմը
- 2) գիշատչությունը
- 3) կոմենսալիզմը
- 4) մուտուալիզմը

30

Ի՞նչն է էկոհամակարգի առաջնային արտադրանքը.

- 1) հետերոտրոֆների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 2) պրոդուցենտների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 3) Էկոհամակարգի կենսազանգվածի առաջացման արագությունը
- 4) կոնսումենտների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում

31

Ո՞ր նյութը կենսահանքային չէ.

- 1) հողը
- 2) օվկիանոսի ջուրը
- 3) քարածուխը
- 4) նավթը

32

Սև առնետները, որոնք նախկինում ապրում էին Եվրոպայի բնակավայրերում, դուրս մղվեցին մոխրագույն առնետների կողմից: Սա փոխհարաբերությունների ո՞ր ձևն է.

- 1) պայքար անօրգանական աշխարհի անբարենպաստ պայմանների դեմ
- 2) ներտեսակային գոյության կրիվ
- 3) ներտեսակային մրցակցություն
- 4) միջտեսակային գոյության կրիվ

33

Ի՞նչը բնորոշ չէ միկրոէվոլյուցիային.

- 1) ավարտվում է նոր տեսակի առաջացմանը
- 2) ընթանում է տեսակի սահմաններում
- 3) հանդիսանում է էվոլյուցիոն գործընթացի սկզբնական փուլ
- 4) տեսակներից՝ նոր ցեղերի, ցեղերից՝ ընտանիքների առաջացման գործընթացն է

34

Ո՞րը իդիոադապտացիայի օրինակ չէ.

- 1) բույսերի պտուղների և սերմերի տարածման հարմարանքները
- 2) կատվաճկների մարմնի տափակությունը
- 3) ներքին քեղմնավորման ի հայտ գալը
- 4) որոշ ձկների երկար լողակների առաջացումը

35

Նշվածներից որո՞նք են համարվում ատավիզմներ.

- 1) մարդու կույր աղիքի որդաննան ելուստը
- 2) մարդու մատների արանքում բաղանթների առկայությունը
- 3) մարդու ականջային և մաշկային մկանները
- 4) մարդու երրորդ կոպի մնացորդը

(36-37) Սննան շղթան կազմված է հետևյալ օղակներից՝ բույսեր-խոտակեր կենդանիներ-գիշատիչներ: Կենդանու զանգված է անցնում կերած սննողի զանգվածի 5 %-ը, և ընդունենք, որ յուրաքանչյուր սննան մակարդակ օգտագործում է միայն նախորդ սննան մակարդակի ներկայացուցիչներին, և զանգվածի կորուստը բույսեր-խոտակեր կենդանիներ օղակում 3800 կգ է:

36

Քանի՞ կգ է կազմել զանգվածի կորուստն ամբողջ շղթայում.

- 1) 4210
- 2) 3610
- 3) 3990
- 4) 190

37

Քանի՞ կգ-ով է ավելացել գիշատչի զանգվածը.

- 1) 3990
- 2) 1
- 3) 10
- 4) 190

38

Զախլիկ և պեպենոտ տղամարդն ամուսնացավ աջլիկ և առանց պեպենների կնոջ հետ: Աջլիկոթյունը և պեպեններ ունենալը դոմինանտում են համապատասխանաբար ձախլիկոթյան և պեպեններ չունենալու նկատմամբ և հանդես են գալիս որպես առատոսումային չշղթայակցված հատկանիշներ: Նրանց առաջին երեխան ձախլիկ էր և առանց պեպենների: Գտնել ձախլիկ և պեպենոտ (հոր ֆենոտիպով) երեխաներ ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 3/4
- 2) 0
- 3) 1/2
- 4) 1/4

(39-40) Խաչասերել են աaBBCcDdEeFf x AABbCcDDEeFf գենոտիպերով առանձնյակներ: Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է ոչ լրիվ դոմինանտություն, իսկ վերջին երեքում՝ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում:

39

Գտնել սերմորում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 108
- 2) 24
- 3) 48
- 4) 54

40

Գտնել սերմորում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 108
- 2) 24
- 3) 48
- 4) 54

41

Սաղմնային գարզացման ընթացքում ո՞ր օրգանը, հյուսվածքը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից է (նշված է աջ սյունակում) առաջանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, հյուսվածք

Սաղմնային թերթիկ

- A. խոիկների էպիթել
- B. ատամների էմալ
- C. նյարդ
- D. աղիքի էպիթել
- E. ոսկոր
- F. երիկամ
- G. մաշկի էպիթել
- H. կմախքի կոճիկային տարրեր

- 1. մեզոդերմ
- 2. էկտոդերմ
- 3. էնտոդերմ

42

Չափանիշի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Չափանիշի բնութագիր

Տեսակի չափանիշ

- A. սպիտակուցների և նուկլեինաքրուների բնորոշ կառուցվածք և կազմ
- B. քրոմոսոմների բնորոշ հավաքակազմ
- C. առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքների նմանություն
- D. տեսակը կարող է գոյատևել միջավայրի միայն որոշակի պայմաններում
- E. առանձնյակների բազմացման նմանություն
- F. տեսակը զբաղեցնում է խիստ որոշակի արեալ

- 1. կենսաքիմիական
- 2. ձևաբանական
- 3. ֆիզիոլոգիական
- 4. գենետիկական
- 5. աշխարհագրական
- 6. էկոլոգիական

43

Կենդանու ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր կենսագործունեության գործընթացն է համապատասխանում (նշված է ձախ սյունակում): Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Կենսագործունեության գործընթացը

Կենդանու տեսակը

- A. թարթիչների օգնությամբ շարժում
- B. կեղծ ոտիկների օգնությամբ շարժում
- C. ավտոտրոֆ սնուցում
- D. չմարսված մնացորդների դուրս բերումը արտազատող անցքով
- E. սննդի հափշտակումը, կլանումը կեղծ ոտիկների օգնությամբ
- F. մտրակի օգնությամբ շարժում

- 1. հողաքափիկ ինֆուզորիա
- 2. կանաչ էվգլենա
- 3. սովորական ամենքա

44

Մարդու օրգանիզմի գործառույթը և բնութագիրը (նշված է ձախ սյունակում) նեֆրոնի ո՞ր բաղադրիչն է (նշված է աջ սյունակում) են համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ և բնութագիր

Նեֆրոնի բաղադրիչ

- A. միանալով նման խողովակների հետ,
ընդհանուր ծորանով բացվում է բուրգի
գագաթային մաս
- B. իջնում է միջուկային շերտ, որտեղից ծնկաձն
ոլորվում է և բարձրանում կեղևային շերտ
- C. գտնվում է երիկամի կեղևային շերտում, պատը
կազմված է երկու շերտից, իսկ ներսում
գտնվում է մազանոթային կծիկը
- D. երկրորդային մեզի տեղափոխում դեպի
երիկամային ավազան
- E. օրգանիզմին անհրաժեշտ նյութերի հետադարձ
ներծծում
- F. առաջնային մեզի առաջացում

45

Մարդու նյարդային համակարգի ո՞ր բաժնին (նշված է աջ սյունակում) ո՞ր գործառույթն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ

Նյարդային համակարգի
բաժին

- A. կոպերի բարքում
- B. փորձի ձեռքբերում և կուտակում
- C. թրագեղձերի աշխատանքի ճնշում և
ադրենալինի արտադրության խթանում
- D. պարտադիր մասնակցություն պայմանական
ուժիքսների առաջացմանը
- E. լեղու արտադրության ակտիվացում
- F. կմախքային մկանների լարվածության
ապահովում

- 1. միջին ուղեղ
- 2. պարասիմպաթիկ
նյարդային համակարգ
- 3. մեծ կիսագնդերի կեղև
- 4. երկարավուն ուղեղ
- 5. սիմպաթիկ նյարդային
համակարգ

46

Ինչպիսի՞ն է զործընթացների հաջորդականությունն անձրևորդի բազմացման
ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ձվաբջիջների և սերմնահեղուկի անցում կցորդի մեջ
2. գոտու վրա լորձային կցորդի առաջացում
3. երկու առանձնյակների հպում, սերմնահեղուկների փոխանակում
4. ձվաբջիջների բեղմնավորում
5. կցորդի շարժում մարմնի երկայնքով դեպի գլխային ծայր
6. կցորդի կարծրացում և վերածում բոժոժի

47

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու արտաշնչման, ապա ներշնչման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. օքսիհեմոգլոբինի առաջացում
2. կրծքավանդակի ծավալի մեծացում
3. ստոծանու մկանների թուլացում
4. օդի անցում թոքեր
5. օդի անցում կոկորդ
6. կրծքավանդակի ծավալի փոքրացում
7. կրծոսկրի շարժում դեպի առաջ
8. միջկողային մկանների կծկում

48

Ինչպիսի՞ն է մարդու լսողական վերլուծիչում գործընթացների հաջորդականությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. նյարդային վերջույթների գրգռում
2. մուրճիկի տատանումներ
3. նյարդային ազդակների (գրգիռների) հաղորդում միջանկյալ ուղեղ
4. հիմային թաղանթի թելիկների տատանումներ
5. ձայնի բարձրության վերջնական զանազանում
6. ձայնային ալիքների որսում
7. ձվաձև (օվալաձև) պատուհանի թաղանթի տատանումներ

49

Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ է տեղի ունենում արյան շրջանառությունը՝ սկսած ներքին օրգանից՝ լյարդից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. աջ նախասիրտ
2. թոքային երակ
3. աջ փորոք
4. թոքային զարկերակ
5. առրտա
6. ձախ փորոք
7. լյարդի երակ

50

Ինչպիսի՞ն է անարողիզմի լնիքացքում տեղի ունեցող այրցեսների հաջորդականությունը.

1. համապատասխան ամինաթթուների միացում փ-ՈՒԹ-ին
2. ամինաթթուների ուսդիկալների միջև հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S-կապերի առաջացում
3. Դ-ՈՒԹ-ի շղթաներից մեկի վրա սինթեզվում է ի-ՈՒԹ-
4. ամինաթթուների միջև պեպտիդային կապի առաջացում
5. ոիքոստմի փոխազդում ի-ՈՒԹ-ի հետ
6. ամինաթթուների միջև ջրածնային կապերի առաջացում
7. ի-ՈՒԹ-ն կորիզից դուրս է գալիս ցիտոպլազմա

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. բջջային կենտրոնը կազմված է երկու փոքր գլանաձև մարմնիկներից՝ միկրոխողովակներից, որոնց պատը կազմված է երեքական խմբերով դասավորված ցենտրիդներից
2. ցիտոզի ժամանակ ծախսվում է ԱԵՖ
3. կապտականաչ ջրիմուռները որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով նրանց ֆուտուինքեզը չի ուղեկցվում թթվածնի անջատումով
4. Էներգիական փոխանակության թթվածնային փուլում, երբ պրոտոնային պոտենցիալը միտոքոնոդրիումների թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, ջրածնի պրոտոններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ ներքին մակերևույթից դեպի թաղանթի արտաքին կողմը
5. ԴՆԹ-ի կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդները իրենց կառուցվածքով և կազմով չեն տարբերվում ՌՆԹ-ների կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդներից
6. մկաններում ԱԵՖ-ի ճեղքան ակտիվությամբ օժտված կծկվող սպիտակուցներից է միոզինը
7. հատիկավոր էնդոպլազմային ցանցով հարուստ են մարդու ենթաստամոքսային գեղձի, քազեղձերի բջիջները

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. մեղուների մոտ չբեղմնավորված ձվաբջիջներից զարգանում են արուները՝ բոռերը
2. մեյոզը տեղի է ունենում սեռական գեղձերի աճման գոտում
3. միտոզի անաֆազից մինչև ինտերֆազի S փուլը յուրաքանչյուր քրոմոսոմ կրում է մեկ քրոմատիդ
4. մոդիֆիկացիոն փոփոխականության ձևերից է համակցական փոփոխականությունը
5. կուսածնության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դուստը առանձնյակն առաջանում է մեկ ծնողական օրգանիզմի սոմատիկ բջջից
6. կոճղարմատը, պալարը, սոխուկը ձևափոխված ընձյուղներ են

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ձկների միջակա ուղեղից դուրս են գալիս տեսողական նյարդերը
2. ուկրային ձկների մեջքային և ենթապոչային զույգ լողակները կատարում են մարմնի դիրքի պահպանման դեր, իսկ կրծքային և փորային կենտ լողակները կատարում են դեկի և տեղաշարժման դեր
3. ուկրային ձկներն ունեն ժապավենաձև, չհատվածավորված մկաններ
4. ջրի վերին շերտերը բարձրանալիս լողափամփուշտը լցվում է գագերով և ձկան մարմնի տեսակարար կշիռը մեծանում է
5. թթվածնով աղբատ ջրամբարներում ապրող ձկների որոշ տեսակներ որպես շնչառության լրացնուցիչ օրգան օգտագործում են նաև լողափամփուշտը
6. ձկների սրտի մկանների կծկման շնորհիվ փորոքից արյունը փորային առրտայով շարժվում է դեպի խոհիկներ
7. ձկների միջին ուղեղից դուրս են գալիս հոտառական նյարդերը

54

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. երկար խողովակաձև ոսկրի շրջոսկրի (վերնոսկրի) արտաքին շերտի բջիջների բաժանման արդյունքում ոսկրն աճում է հաստությամբ, իսկ ներքին շերտի բջիջների բաժանման արդյունքում՝ երկարությամբ
2. հանգիստ ներշնչման ժամանակ գազափոխանակությանը մասնակցող օղի քանակը կոչվում է բոքերի կենսական տարրություն
3. թոքարշտերի պատերը կազմված են բազմաշերտ էափելային հյուսվածքից
4. հարթ մկանային հյուսվածքը կազմված է մանր իլիկաձև միակորիզ բջիջներից
5. կարճատեսության դեպքում ճառագայթների հատման կետն ընկնում է ցանցաթաղանթից առաջ
6. սրտի ձախ նախասրտի և ձախ փորոքի բացվածքի սահմանում գտնվում են եռափեղկ փականները
7. վեգետատիվ նյարդային համակարգի նյարդաթելերը մարմնական նյարդաթելերի համեմատ ավելի բարակ են, և ավելի դանդաղ են հաղորդում նյարդային ազդակները

55

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. Էվոլյուցիայի շարժիչ ուժ է բնական ընտրությունը
2. ոսղիուակախիլ ճառագայթումը, մրցակցությունը, գիշատչությունը, ջերմաստիճանը ոչ կենսածին էկոլոգիական գործոններ են
3. պոպուլյացիան վերտեսակային խմբավորում է
4. առաջին կարգի կոնսումենտները որպես սնունդ օգտագործում են արողություններին
5. երկարաբակտերիաները և ծծմբաբակտերիաները ավտոտրոֆ քեմոսինթեզողներ են
6. լրված դաշտի տարածքում լայնատերև անտառի վերականգնումը հանդիսանում է առաջնային սուլցեսիայի օրինակ

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. տրամախաչումը տեղի է ունենում մեյոզի առաջին բաժանման պրոֆազում կոնյուգացիայի ժամանակ
2. բեղմնավորման ժամանակ գամետների պատահական գուգակցման գործընթացն ընկած է համակցական փոփոխականության հիմքում
3. իգական օրգանիզմը զարգանում է այն գամետից, որի ձևավորման ժամանակ մեյոզի առաջին բաժանման պրոֆազում, տրամախաչման արդյունքում, իգական սեռը պայմանավորող երկու X քրոմոսոմները հայտնվում են մեկ շղթայակցման խմբում
4. հատկանիշների ճեղքավորման օրենքը Մենդելի երկրորդ օրենքն է
5. Մենդելն իր հետազոտություններում օգտագործում էր մաքուր գծերին պատկանող օրգանիզմներ, որոնք մի քանի սերունդ հետազոտվող հատկանիշի առումով շարունակ տալիս էին ճեղքավորում միևնույն հարաբերությամբ
6. գամետների մաքրության օրենքը պնդում է, որ գամետների առաջացման ժամանակ դրանցից յուրաքանչյուրի մեջ ընկնում են ժառանգական գույց գործոններից տվյալ հատկանիշին համապատասխանող երկու գործոնները

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. միտորնորդիումներին բնորոշ է լիալիների փոխանակությունը
2. կորիզաքաղաքացին և կորիզակները տեսանելի են միայն բաժանվող բջիջներում
3. էնդոպլազմային ցանցը բջջային թաղանթների կառույց է, սակայն ի տարբերություն պլազմալեմի՝ այդ թաղանթը շատ բարակ է
4. մեղուների և մրջյունների օրգանիզմում սեռական քրոմոսոմների դիալոփի հավաք
5. պլաստիդների կազմության մեջ մտնող գրանները, մեկը մյուսի վրա դասավորվելով, առաջացնում են բազմաթիվ թիթեղիկներ, որոնք կոչվում են թիթակուլոներ
6. Գոլջիի ապարատը բնորոշ է կորիզավոր բջիջներին, ունի ցանցանման կառուցվածք
7. ոիրոսմի բաղադրության մեջ սպիտակուցների և ո-ՈՒԹ-ի քանակությունները գրեթե հավասար են

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. անձրևորդի կրային գեղձերի ծորանները բացվում են կերակրափողի մեջ
2. գորտի ակնազմները օգնում են սննդի կլլման գործընթացին
3. թռչունների ձախ փորոքից դուրս է զալիս առտայի ձախ աղեղը
4. սննդի շմարսված մասերը հիդրայի մարմնից հեռացվում են հատուկ արտազատող անցրով
5. Ժապավենաձև որդերի մարսողական համակարգը հետ է զարգացել
6. նախազազանները չունեն շրթունքներ, ունեն կոյանոց
7. քերի կերպարանափոխությամբ զարգանում են մրջյունները, բգեցները

59

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. տասներկումատնյա աղիքում սննդախյուսը ենթարկվում է լեղու և ենթաստամոքսահյութի ազդեցությանը
2. ատամի խոռոչը լցված է կակղանով
3. ստամոքսում ավարտվում է սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի ճեղքումը մինչև մոնոմերներ
4. լյարդում լեղու արտադրությունն արգելակվում է երկարավուն ուղեղից հաղորդվող նյարդային գրգիռների ազդեցության տակ
5. B_{12} ավիտամինոզի պարագայում զարգանում է չարորակ սակավարյունություն
6. հաստ աղից ուղիղ աղի անցման տեղում գտնվում է կույր աղին՝ իր որդանման ելունդով
7. A վիտամինը մասնակցում է տեսողական գումակ ոռողապահնի ձևավորումն ապահովող ֆերմենտների աշխատանքին

(60-61) Օրվա ընթացքում մարդու մաշկի մակերևույթից գոլորշիացել է 0.8 կգ քրտինք:

60

Որոշել օրվա ընթացքում մարդու մաշկի 1m^2 մակերևույթից ճառագայթված զերմային էներգիայի քանակը (\mathcal{Q} -ով), եթե մաշկի մակերեսը 2m^2 է: Հաշվի առնել, որ մաշկի մակերևույթից ճառագայթվող զերմային էներգիան 3 անգամ գերազանցում է գոլորշիացման միջոցով հեռացվող էներգիայի քանակը և 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է $2,45 \text{ kJ}$ էներգիա:

61

Ընդամենը քանի՞ գրամ քրտինք կգոլորշիացվեր մաշկի մակերևույթից, եթե ճառագայթված էներգիան նույնական ծախսվեր քրտինքի գոլորշիացման համար:

(62-63) Օրվա ընթացքում ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու օրգանիզմում յուրացվել է 768 լ O_2 : Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,6 անգամ, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղվող արյան ծավալը՝ 1,2 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 20 շնչառական շարժում, սրտի բռնրաշրջանի տևողությունը 0,8 վրկ. է և մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 65 մլ արյուն:

62

Քանի՞ ժամ է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

63

Մեկ օրվա ընթացքում քանի՞ լիտր արյուն են արտամղել փորոքները:

(64-65) Գենի զանգվածը 232 500 գ.ա.մ. է:

64

Որոշել տվյալ գենով կողավորվող սպիտակուցի մոլեկուլային զանգվածը (գ.ա.մ.-ով), եթե մեկ նուկլեոտիդի միջին մոլեկուլային զանգվածը 310 գ.ա.մ. է, իսկ մեկ ամինաքրվային մնացորդինը՝ 130 գ.ա.մ.։

65

Զանի^o թիմինային նուկլեոտիդ է պարունակվում տվյալ գենում, եթե հայտնի է, որ U/G հարաբերությունը հավասար է 0,5-ի:

66

Գլուկոզի ճեղքման անթթվածին փուլում անջատված ջերմային էներգիայի 15 %-ը՝ 420 կՋ հեռացվել է օրգանիզմից ջերմահաղորդման միջոցով: Քանի՞ կՋ է կազմում ընդհանուր էներգիան, եթե հայտնի է, որ ամբողջ պրոցեսի արդյունքում առաջացել է 460 մոլ H_2O : Ընդունել, որ 1 մոլ գլուկոզից մինչև կաքնարքու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ, իսկ $A\dot{C}F$ -ից $A\dot{C}F$ -ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋուլ/մոլ էներգիա:

67

(67-68) Ծառը 30 օրվա ընթացքում (16-ժամյա լուսային օր) սինթեզել է 19,2 կգ օրգանական նյութ (գլուկոզ):

Քանի՞ գրամ O_2 է արտադրվել այդ ընթացքում:

68

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (m^2):

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ալբինիզմ և ֆենիլկետոնուրիա հիվանդությունների պատճառն առաջանալու առաջնային դրույթն է
2. հավլուիդիայի հետևանքով հավլուի օրգանիզմի մարմնական բջիջներն ունենում են քրոմոսոմների դիպոլիտ հավաք
3. հավլուիդներն անպառող են, նրանց մոտ դրսւորվում են ռեցեսիվ գեները
4. պոլիավլուիդիայի առաջացման պատճառներից են մեյոզի գործընթացի այնպիսի խանգարումները, որոնք բերում են չուդուկցված քվով քրոմոսոմներ պարունակող գամետների առաջացման
5. Դառնի սինդրոմն անեռուավլուիդիայի հետևանք է
6. կանանց օրգանիզմում հավելյալ X քրոմոսոմի առկայությունը հարուցում է Շերեշևսկու և Թերների սինդրոմը

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Էրիթրոցիտները չափսերով գերազանցում են թրոմբոցիտներին և լեյկոցիտներին
2. արյան II խումբ ունեցող մարդկանց էրիթրոցիտների թաղանթներում առկա է β ագլյուտինինը, իսկ պլազմայում՝ A ագլյուտինոգենը
3. ավշային մազանոթները միմյանց միանալով առաջացնում են խոշոր անոթներ, որոնք երկու մեծ ծորաններով թափվում են ձախ նախասրտում բացվող սիներակների մեջ
4. առողջ մարդու օրգանիզմում 1 մմ³ արյան մեջ պարունակվում է 60000-80000 լեյկոցիտ
5. կալցիումից զուրկ արյունը չի մակարդվում
6. լիմֆոցիտների հասունացումն ավարտվում է ավշային հանգույցներում, ուրցագեղձում